



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10- 1  
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 11 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Ք. ՉԱՐԵՆՑԱՎԱՆ  
01.12.2022Թ.

Համայնքի ավագանու նիստի աշխատանքներին ներկա են ավագանու 26 անդամները, աշխատակազմի քարտուղար Ս.Մուրադյանը, համայնքապետարանի աշխատակազմի բաժնի պետեր Վ.Բարսամյանը, Բ.Բալբաբյանը, Ա. Ծերունյանը, Ա.Զաքարյանը, Ս.Բալաբեկյանը, Գ.Աֆյանը, գյուղերի վարչական ղեկավարները:

Բացակայում է Նորիկ Վարդանյանը:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Ձեզ եմ ներկայացնում համայնքի ավագանու առաջին նստաշրջանի թիվ 1 նիստի օրակարգը.

1. Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:
2. Չարենցավան համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:
3. Չարենցավան համայնքի ավագանու մշտական հանձնաժողովներ ստեղծելու և դրանց կազմերը հաստատելու մասին:
4. Չարենցավան համայնքի Կոտայք 7 միկրոոեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծման առաջադրանքը հաստատելու մասին:
5. Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի ավագանու առաջին նստաշրջանի 2-րդ նիստի գումարման օրը սահմանելու մասին:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալոյան**

Եթե առարկություններ չկան, քվեարկության եմ դնում որոշումը օրակարգային հարցի վերաբերյալ:

Կողմ - 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

Օրակարգն ընդունված է /կցվում է որոշումը/:

Լսեցին.

**1. Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգն ընդունելու մասին:**

*/Չեկ Ս.Մուրադյան/*

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, **առաջարկում եմ՝** ընդունել Չարենցավան համայնքի ավագանու կանոնակարգը՝ համաձայն հավելվածի /կցվում է/:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

Լսեցին.

**2. Չարենցավան համայնքի ավագանու խմբակցություններ ստեղծելու մասին:**

*/Չեկ Ս.Մուրադյան/*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 66-րդ հոդվածով և հիմք ընդունելով թիվ 27 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2022 թվականի հոկտեմբերի 02-ի N 11-Ա որոշումը, **առաջարկում եմ՝** ստեղծել Չարենցավան համայնքի ավագանու հետևյալ խմբակցությունները.

- |  |          |
|--|----------|
| 1) «Միասնական համայնք դաշինք» խմբակցություն- | 14 անդամ |
| 2) «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցություն-  | 11 անդամ |
| 3) «Ապրելու երկիր» խմբակցություն-            | 2 անդամ  |

Ի գիտություն ընդունել համայնքի ավագանու խմբակցությունների ներկայացրած կազմը, խմբակցությունների ղեկավարների և քարտուղարների անուն ազգանունները, կանոնադրությունները:

**Համայնքի ղեկավար Հ. Շահգալդյան**

Քվեարկության եմ դնում որոշումը:

Կողմ- 26

դեմ - 0

ձեռնպահ - 0

**Որոշումն ընդունված է /կցվում է որոշումը/:**